

ԳԱԴՐՎԱՆՔԻ ՆՈՐԱՀԱՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՏՐԷԼԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Ս. Ն. ՀԱՆՈՐՅԱՆ, Ն. Ե. ՍԵՄԵՆՅԱՆ

Դրիչ Գավիթ կոչակոտոր 1606 թ. իր ընդօրինակած Ավետարանի վերջում բաժակախն մանրամասն նկարագրում է ՄՅՄ գաղթի սկզբի քուրբ-պարսկական ընդհարումների արշավնոտ զրվագները: Ենթանկ սասանյան զորացուցիկ նշվում է, որ Գեղարքունիքի իշխան Սելիք Նախապետը, օսմանյանների նախնադրերը, իսկու տարու նպատակով, իր ժողովրդի մեծ մասի լուծափախում է Սար և Տպէլ քաղաքում եղև զարուն, այս բարեմեա և իմաստուս իշխանս պարոն Սելիք Շահնապարս, իմացաւ զոխս սրտից Սասան աւելաւ, Բրասաւ արար երկիրս իւր նկայր մտցուր յասորս, զի սի լիցուր կոխաս ալլազգացու և խորն զնաց ի Սար և ի Տպէլ: Եւ որք զՆա արտ զնացին, զերծաս ի սրս, և ի զերտիկն, ալլազգեաց: Եւ լետ սակաւ ատուրց ելին զսորս Լուսաւա ի վերայ Գեղամայ երկիրս, զսմանս կոտորեցին, և զսմանս զերկցուցին Գ(3) անգամ, թողին մեծ սուր և կակիծ մեկ ամենեկունս»<sup>1</sup>:

Հիշատակարանի ենթատեքստը հուշում է, որ այսանկ հիշատակված Սար և Տպէլ անգանունները կարող են հանդիսանալ ինչպես բնակավայրեր, այնպես էլ զավատներ<sup>2</sup>: Միջնադարում բաշածանոթ վարչական և հոգևոր կենտրոն Սար ավանը գտնվում է Տրատի (Քարթլուսի) կիրճի ձախակողմյան բարձրավանդակի վրա, ուստի արտամարտահական է, որ Սարս զավատի սերտ ստացին Ներթին ընկալվել է Տրատի վերին գետահովիտը Տպէլի տեղափոխվումը մինչ այժմ ոչ միայն անհայտ է, այլև ընդհանրապես չի արժարօգել զխաղան զբակաստիկան մեջ: Միջնադարյան սկզբնադարձութից մեկ հայասի են Տպէլ անվան ևս երկու հիշատակումներ, սակայն արդևս որդևս անձնանուն: Սարգիս վարդապետ Ջալալյանցը Գաղիվանքի գտնվում հիշատակում է արժմ շառհապանված մի տապանարար, որի վրա զրված է եղել՝ «Այս է տապան Սարգսի որդւոյ Տպէլայ, ի թղին հալոց 1293 թ.»<sup>3</sup>: Հաջորդ վկայությունը գտնում ենք զրիչ Բարսեղի ընդօրինակած Ավետարանի 1117 թ. հիշատակարանում, ու... լիշեցէր ի ՔՍ գևտարի բահանայ և զսմուսինն իւր զՀերթին և զհայրն նորա զԱմիրն և զմայրն նորա զԵրուզն և զեղրալը նորա զՏպէլն, զՄիթիթարն, հարեկրայրն զԼուսաղեկն և զգաւակն՝ զՅակոբն...»<sup>4</sup>:

<sup>1</sup> Հայերեն Անտղրերի հիշատակարաններ, ԺԺ դար, հ. Ա, Երևան, 1974, էջ 218—219:

<sup>2</sup> Միջնադարյան զրավոր սղրչութեներում Սար երկիրը հիշատակվում է ավելի հաճախակի, քան Սար ավանը: Բջինի Սուրբ Աստվածածին Էկեղեցու 1031 թ. արձանագրությունում Սարը վկայվում է որդևս զԵտանուն, որի ներքո ամենայն հավանականությամբ տեղոր է ընկալվել Տրատ գետը:

<sup>3</sup> Ջալալյանց Սարգիս վարդապետ. Ընանագար: Որդու թիւն ի Մեծն Հայաստան. մասն Բ, Տիֆլիս, 1812, էջ 223: Ս. Բարսեղարչան. Գիվան հայ վիմագրության, զրակ Ե. Արցախ, Երևան, 1982, էջ 215 (սուղոյ բարս վոթղակով ներկայացրել է որդի՝ ձևով):

<sup>4</sup> ԺԺ դարի հայերեն Անտղրերի հիշատակարաններ, մասն Ա (1401—1450 թթ.), կաղմեց է. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 205:

Վերոհիշյալ գրավոր աղբյուրներից զատ Տպէլ անունը հիշատակվում է նաև Դագիվանքի նորահայտ արձանագրությունում, որը պարունակում է տոհմագրական, տեղագրական, շինարարական և պատմական կարևոր տեղեկություններ: Այն հայտնաբերվել է Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր Հուշարձանների պահպանության վարչության<sup>5</sup> Հայկական Հուշարձանների համահավաքի խմբագրության՝ ազատագրված տարածքների պատմամշակութային արժեքները ուսումնասիրող արշավտխմբի կողմից (ղեկ. Հակոբ Սիմոնյան), որը 1993—1997 թթ. համակողմանի ուսումնասիրություններ կատարեց նաև Դագիվանքում<sup>6</sup>:

Դագիվանքի պարսպապատ հատվածի կառույցները խմբավորված են երկու դարավանդների վրա: Վերին՝ հյուսիսային դարավանդը, զբաղեցնում են պաշտամունքային կառույցները՝ եկեղեցիները, զավիթը, զանգակատունը, տապանատունը, սյունասրահը, նշխարատունը, իսկ հարավային դարավանդում տեղագրված է աշխարհիկ կառույցներից բաղկացած համալիրը՝ տաճարը, վանականների բնակելի տները, սեղանատունը խոհանոցով, հյուրատունը, մառանը, հնձանը: Արձանագրությունում հիշատակված տները և սրահը զբաղեցնում են դարավանդի ծայր արևելյան հատվածը՝ արևելքից և հարավից եզերված խոր ձորակներով, հյուսիսային մասով հաված բնական դարավանդին, արևմուտքից՝ տաճարին: Կառուցված է ճեղքված տարասեռ քարերով և կրաշաղախով: Բաղկացած է եղել հատակագծում ուղղանկյուն 3 սենյակներից, որոնցից մեկը, թերևս սրահ<sup>7</sup> անվանվածը՝ զմբեթավոր է, երգիկով և մեկ սյունով: Ըստ ճարտարապետ Ն. Սանամյանի, սրահին արևելքից և հարավից կցված են եղել երկու թաղակապ սենյակներ, որոնցից հարավայինին արևմուտքից կցված է կամարակապ բացվածքով նախասրահ, Արևելյան սենյակը հետագա վերակառուցումների ժամանակ բաժանվել է երկու մասի և դարձվել երկհարկանի: 1888 թ. Դագիվանքը փակելուց հետո տեղի մահմեդական բնակիչները այս շինությունը օգտագործել են որպես գոմ: Այժմ կառույցը գտնվում է կիսաքանդ վիճակում. ծածկերը և երկրորդ հարկի հատակները փրված են, պատերը՝ խարխլված: Արձանագիր բարավորի քարը ամրացված է թաղակապ սրահի հարավային մուտքի սլաքաձև կամարի ներքո, արտաքին լատերից ներս ընկած դիրքով: Թերևս որպես գոմ սրահի օգտագործումը և բարավորի քարի «քողարկված» լինելը եղել են արձանագրության անհայտ մնալու պատճառները:

Արձանագրությունը փորագրված է դեղնավուն տուֆաֆելիզիտային ասպարից կերտված բարավորի ճակատային, սրբատաշ մակերեսին: Հինգ տողից բաղկացած արձանագրությունը ձգվում է կամարաձև կիսաբոլոր քարի պարագծով (կիսաշրջանի բարձրությունը 79 սմ է, ներքին եզրի երկարությունը 150 սմ): Կազմված է 5 սմ բարձրությամբ բոլորգիծ երկաթագիր տառերից: Հարուստ է կցագրերով և հապավումներով: Տողերը միմյանցից անջատված են տողագծերով (միջտողային հեռավորությունը 2 սմ), իսկ առաջին տողը վերևից և ներքևից եզերվում է ուլունքաշար հիշեցնող ղարղաղոտիով՝ բաղկացած տակառաձև և շրջանաձև ղարղերի հաջորդական շղթայից: Բարավորի քարի ստորին եզրի կենտրոնական մասում քանդակված է կիսաբոլոր ութաթև վարդյակ (տրամագիծը 28/32 սմ), իսկ փերին մասում, սլաքաձև կամարի ներքո՝ մեկ այլ ութաթև վոթը (տրամագիծը 6 սմ) վարդյակ. Պտհ-

<sup>5</sup> Այժմ Հայաստանի Հանրապետության Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության Հուշարձանների պահպանության վարչություն:

<sup>6</sup> Արձանագրությունը հայտնաբերվել է 1993 թ., արտանկարվել 1994 թ. վահան Գայսերյանի կողմից, իսկ այնուհետև հեղինակները տեղում ուսումնասիրել և վերծանել են այն:

<sup>7</sup> Սրահ—դալիթ. հրապարակ ապարանից զկնի նախադրան, յոր նախ մտանէ եկեալն, եւ ապա անտի ի ներքս, եւ այս թէ յարկաւ ծածկեալ իցէ, եւ թէ անյարկ. եւ մեծ սենեակ ատենի. Ժողովարան. դանլից (տե՛ս Բառագիրք Հայկազեան լեզուի, հ. երկրորդ, Կոստանդնուպոլիս, 1848, էջ 890):

պանվել է ամբողջութեամբ, բարձր վիճակում, թեև ատանձին տառեր չողմնաշարված են, իսկ բարի մակերեսը ծածկված է մոխր շերտով:

ՅՈՒՍՈՎՆ ԱՅ ԵՄ ՅՐ ԴՐԻԿՈՐԷՍ ԵՒ ՅՐ ԱԹԱՆԱՍ ԵՂՔԷՐ ԻՄ, ՈՐԴԻՔ ՀՍՍԱՆ ՊԱՐՈՆԻ, ՇԻՆԵՅՍՔ ՉՅՆԵՐ ԵՍ ԵՒ ՉՍՐԱՀՍ: ԵՒ ԱՐԿ ԱՂԵՐՍՈՒԻ ՀԱՅՅԵՄ, ՈՐ ՉԿՆԻ ՄԵՐ ՏԱՂԱԿԱՐԻ ԱՍՏ, ՅԻՇԵՍՅԷ ՉՄԵՉ ՅՈՂՈՐՄԱԾՆ ԱՍ: ԸՆԿ ՆՄԵՆ ՊԱՐԵԿՐԱՆԵՐՆ ՄԵՐ ՏՐ ԴՂՐԻԿՈՂԻ, ՆԱՅԵՒ ՉԵՂՔԱՐՍՆ ՄԵՐ ԵՒ ՉՄԱՍԱԿՆԵՂՈՐԻ ԿՐԻՔԱՐ ԱՅԱՄ ՏԱ ՆՍ, ՉՏՊԵՐՆ ԵՒ ՉՇԱՍՈՒԱՅՆ ԵՒ ՉԴՐԻԿ, ՊԱՀԵՍՅԷ ԲՍ ԸՆԿ ԵՐԿԱՅՆ ԱԻՈՒՐ Ս, ԵՒ ՈՎ ՉՄԵՉ ՅԻՇԷ, ԻՆՔՆ ՄԻՅԻ ՅԻՇԷԱԿ ԱՌԱՋԻ ՔԻ:

Այստեղ խոսքը դնում է Համերթի, Հանդարերդի, Խաչենարերդի և Հափախաղացի տեղ Հասան Մեծ իշխանի որդիներ Գրիգորիսի և Աթանասի շինարարական գործունեության մասին: Որ զրանք իտք Հասան Մեծի որդիներն են, համաստում է նաև Կորեգորս՝ տեղ Գրիգորի անվան շինատակումը, որի վանահայրության ժամանակ Հասան իշխանը իր ընդերքը և զավատները հանձնում է որդիներին, իսկ ինքը սրպես կրոնավոր հաստատվում Գաղիփանքում, իր եղբայր տեղ Գրիգորի մոտ: Տեղ Գրիգորիսը և տեղ Աթանասը XIII դարի գործիչներ են: Այս բազմասնյակ շինությունը կառուցվել է տեղ Գրիգորիսի 1211 թ. կառուցած սաճարին կից: Ճարտարապետական դիտարկումների համաձայն, խիստ որոշակի է, որ սաճարի կառուցումը նախորդել է բնակելի տների շինարարությանը, հետևաբար այն եղել է 1211 թ. հետո, թերևս 1211—1214 թթ. միջակայքում, երբ զեռ կենդանի էր Գաղիփանքի ատաշնորդը, Հասան Մեծի եղբայր Գրիգորը: Գտնելով արձանագրությունից վերջինս շինատակում է ողջերի թվում, մինչդեռ 1211 թ. Արղու Խաթունի կառուցած Մուրք Կաթագիկի շինարարական ընդարձակ արձանագրությունում տեղ Գրիգորը այլևս չի շինատակվում<sup>8</sup>, իսկ ՈՐ ՉԿՆԻ ՄԵՐ ՏԱՂԱԿԱՐԻ ԱՍՏ» համաձայն կախարհները դիմում են իրենցից հետո այս աներում տապալաբողներին, այն է՝ լիակազմներին<sup>9</sup>: Քանի որ տեղ Գրիգորիսը և նրա եղբայր տեղ Աթանասը բարձրաստիճան չողորականներ էին, որոնք տեղ Գրիգորից հետո հաջորդապես զարձան Գաղիփանքի ատաշնորդներ, որոշակի է, որ նրանց կառուցած աները նախատեսված էին սրպես բարձրաստիճան վանականների բնակարաններ և որ նրանցից հետո այստեղ պետք է բնակվեին զարմյակ վանքի առաջնորդները: Հետևաբար, որոշ վերստացումով, այս կառույցը կարելի է համարել առաջնորդարան: Կառույցի ֆունկցիոնալ նշանակության մասին մեր առաջ բաշած վարկածը իմնավորվում է ոչ միայն արձանագրության ավյակներով, այլև ճարտարապետական ձևերի և ակադեմիայի վերլուծությամբ<sup>10</sup>:

8 Ա. Բ ա ս ի ս ո յ գ ա ռ յ ա ն, Գրիգորի Վայ վիճակության, պրակ 5, Արցախ, էջ 198;  
9 Նույն ակում, էջ 212;  
10 Նույն ակում, էջ 198—199;  
11 Բառագիրը Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1769, էջ 149: Բառագիրը Հայկազեան լեզուի, Ն. Երկոթր, էջ 76:

12 Մուրքը Հասանի վանքը բաժանված ժամանակ անհարգում է այս կառույցը և ճարտարապետական այլ շամպիներին նա համեմատելով, հանդում է եղբայրության, որ գմբեթավոր սրահը ծառայել է որպես գրասենյակ, իսկ նրան կից սենյակները՝ գրիչների բնակարաններ (Մ ս ո յ գ ա ռ յ ա թ յ ա ն, Հայկական ճարտարապետության Արցախի զոլոթը, Երևան, 1992, էջ 35—39): Մեր կարծիքով կառույցի ֆունկցիոնալ նշանակությունը պարզելու գործում խիստ կարևոր է արձանագրության չողորդումը, որակը այն նշվում է սրպես տներ և սրահ՝ մեծ սենյակ տակեր, մալխարան: Եթե նախապես այս կառույցը նախատեսված լիներ որպես գրագրարան, ապա արձանագրությունում կփոխակերպվեր միջնադարում բայն գործածություն ունեցող գրատուն կամ գրատուն տերմինով:

Արձանագրության հաջորդ հատվածը մեր կարծիքով տոհմագրական, թերևս նաև տեղադրական արժեքավոր տեղեկություններ է պարունակում.  
 «...ՀԱԻՐԵՆԴԱՅՐՆ ՄԵՐ ՏՐ ԳՐԻԳՈՐ, ՆԱՅԵՒ ԶԵՂՐԱՐՄՆ ՄԵՐ ԵՒ ԶԺԱՆԱՆԻ ԳՈՐԼԻՅՔ ԱՅՍՄ ՏԱՆՍ. ԶՏՊԷԼՆ ԵՒ ԳՇԱԼՈՒԱՅՆ ԵՒ ԶԳՐԻԳ...»:



Ինչպես նշեցինք, Տպէլ անունը միջնադարյան աղբյուրներում հիշատակվում է կ' որպես անձնանուն, կ' որպես տեղանուն: Շայվա անունը, որը Արցախում խիստ հազվագեպ է հանդիպում, դարձյալ հայտնի է կ' որպես անձնանուն, կ' որպես տեղանուն<sup>13</sup>: Շայվա անունով գյուղ և գետ գտնվում են Արցախի Վաղուհի գավառում, ներկայիս Քարվաճառի Քաջաթաղից, բաժանող ջրբաժան լեռնաշղթայից հարավ<sup>14</sup>: Դավիթ եպիսկոպոսի վերոհիշյալ հիշատակարանում նշված Մար և Տպէլ տեղանունները հանդես են գալիս համատեղ: Տեքստից բխում է, որ վերջինս պետք է գտնվեր Մասի հարևանությամբ, մի դժվարամատչելի վայրում: Մաբա (Տրտու) գետից հարավ ընկած է շրոս կողմից բարձրաբերձ լեռներով շրջափակված, բնականից բացառիկ պաշտպանվածությամբ օժտված Տրտուի աշակողմյան վտակ Տուտխուի (Թուխուհի) հովիտը: Մինչև խորհրդային կարգերի օրոք հաղորդակցության ուղիները՝ թունելի և Տրտու գետի վրա կամուրջի կառուցումը, այն փաստորեն կտրված էր արտաքին աշխարհից և արհավիրքների ժամանակ հիանալի պատարան կարող էր ծառայել: Լոկ լեռնային դժվարանրանելի արտհետներով, այն էլ միայն ամռան ամիսներին, կարելի էր թափանցել այնտեղ: Այնպես որ, Մելիք Շահնազարը ամենայն հավանականությամբ հետապնդումներից խուսափելու համար նախ անցել է Մար, ապա կրթ վտանգը ավելի է սաստկացել՝ Տուտխուի հովիտը՝ Տպէլ: Տպէլ գյուղի և նույնանուն գավառակի Տուտխուի հովտում գտնվելը վերջնականապես հաստատվում է այս հովտի վերնամասում գտնվող Բաշլիքեյ գետակի և Բաշտիրեյ-Բաշ Տպէլ-Մեծ Տպէլ<sup>15</sup> անվամբ դյուղի առկայությամբ: Վերջինս վկայված է

13 Գեոևս անհասկանալի է ԶԳՐԻԳ անվանումը, որը հիշեցնում է Գրիգոր անձնանունը, սակայն այս բառի վրա բացակայում է պատվո նշանը, ինչը կասկածի տեղիք է տալիս նման վերծանության համար:  
 14 Շայվա անձնանունը խիստ հազվագեպ է հանդես գալիս հայկական արձանագրություններում. տե՛ս Դիվան հայ վիճագրության մատենաշարը:  
 15 Որոշ աղբյուրներում Մեծ մակերով է մեծարվում նաև Մարը. տե՛ս Սիմեոն Իրեւանցի. Քամրո. Վաղարշապատ, 1873, էջ 283:



НОВОВЫЯВЛЕННАЯ НАДПИСЬ ДАДИВАНКА И  
ВОПРОС ЛОКАЛИЗАЦИИ ТПЭЛА

А. А. АКОПЯН, А. Е. СИМОНЯН

Р е з ю м е

Дадиванк—один из знаменитых монастырских комплексов средневековой Армении—находится в гаваре Цар провинции Арцах Великой Армении. Обнаруженная в 1993 г. надпись на тимпане одного из зданий южной террасы содержит важные сведения о функциональном назначении этой постройке, о генеалогии Хаченского княжеского дома, а также о топонимике этого края. Согласно документам XIX—начала XX в. царской России, на верховьях реки Тутху (Тутхун)—правого притока Трту (Тартар) находилось одно из наиболее больших селений Карвачарского района—Баш Тпэл (Большой Тпэл), имя которого, впоследствии искажаясь, дошло до нас в виде Башлибель. Установлено, что упомянутый в новонайденной надписи и в других средневековых армянских источниках топоним Тпэл находится в бассейне Тутху. В начале XIII в. под названием Тпэл и Шалва подразумевались как ветви Хаченского княжеского дома, так и их поместья с одноименными центрами, имена которых дошли до нас как названия селений.

A NEW-FOUND INSCRIPTION OF DADIVANK AND THE PROBLEM OF  
LOCALIZATION OF TPEL

A. H. HAKOBIAN, H. E. SIMONIAN

S u m m a r y

Dadivank, one of the most significant monastery complexes of Medieval Armenia, is situated in the province of Tsar of Artsakh state. The inscription found in 1993 on a vault-stone of the southern terrace of one of the building bears important data about its functional meaning. It also bears information about the family-tree of the noble home of Khachen and about some place names in Artsakh. The analyses of this inscription gives the opportunity to clear up the site of Tpel mentioned in medieval manuscripts. It was situated in the basin of the Toutkhoun (Toutkhoun), a tributary of the river Tertou (Tartar). It is worth mentioning that according to XIX—XX cc. Russian sources in this very place there was a settlement and a small river both named Bash Tpel (Great Tpel) whose name during the Soviet period was corrupted to Bashlibel.

The inscription proves that at the beginning of the XIIIc. the names of Tpel and Shalva symbolized not only the offshoots of the noble home of Khachen but also their estates with the centres by the same names which have reached us as the names of vilfages.